600.0293.30.05.08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2008 թվականի №293Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №272Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել՝

1) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝
   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.711 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3.253 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
   բ. հզորության ամսական վճարը՝ 2189.55 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2627.46 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
2) «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝
   ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 13.372 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 16.046 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
   բ. հզորության ամսական վճարը՝ 383.05 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 459.66 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,
   գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 13.372 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 16.046 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.
3) «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 12.895 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 15.474 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 590.86 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 709.03 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 12.895 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 15.474 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա. առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 0.133 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.160 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. հզորության ամսական վճարը՝ 182.84 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 219.41 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա. էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար)՝ 0.328 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.394 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 0.328 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 0.394 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 30-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» №606Ա որոշման 1-ին կետի 1) -ին, 2) -րդ, 3) -րդ, 4) -րդ և 6) -րդ ենթակետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1- ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 մայիսի 2008թ.